



ՎԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՎԱՉՈՒՏՅԱՆ ԻԾԽԱՆԱԿԱՆ ՏԱՆ ԵԿԵՂԵՑԱԾԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1196 թվականին Զաքարեն և Իվանեն գրավեցին Անքերդ ամրոցն ու իջան Արարատյան դաշտ¹: Գրաված հողերի վերականգնությունը նրանք վստահեցին Վաչուտյան Սարգսի որդի Վաչեին: Վաչեն ստացավ Արագածոտն, Նիգ, Ծիրակ գավառները ու շրջակա հողերը՝ մինչև Երասխաձոր և Արարատյան կողմնակալությունը²:

Զաքարյան իշխանության այս կարկառուն ներկայացուցիչները իրենց մեկուկեսդարյա իշխանության տարիներին (մոտ 1200—1360 թթ.) ռազմական ու աշխարհիկ գործերից բացի շինարարական ծավալուն աշխատանքներ կատարեցին: Մեծ ու չափազանց տարողունակ է Վաչուտյանների եկեղեցաշինական գործունեությունը:

Սերնդե-սերունդ Վաչուտյան տան իշխանները երկրամասի տարբեր ծայրերում եկեղեցիներ, գավիթներ, եկեղեցիների կից շինություններ են կառուցել, հովանավորել են այդ և իրենց հայրենիք-կալվածքներից շատ ու շատ հեռու գտնվող մշակույթի կենտրոն օջախները՝ Հառիճի վանքը Արթիկի շրջանում, Հաղբատի, Սանահնի, Հոռոմոսի, Կեչառիսի, Սևանի Առաքելոց վանքերը:

Իշխանական տան հիմնադիր Վաչե Վաչուտյանը 1211 թվականին կառուցում է Զաքարյանների իշխանության տակ գտնը-

վող Սանահնի վանքի գավիթը³ դնելով այդ մեծ գործի սկիզբը: Դա, անշուշտ, պատահաբան էր այն մեծ վստահությանը, որ ցուցաբերել էին Զաքարեն ու Իվանեն և Վաչեին նշանակել իրենց հարավային հողերի տեր՝ Արարատյան աշխարհի կողմնակալ:

Վաչեի շինարարական գործունեությանը մեծ չափով նպաստել է կինը՝ Մամախաթունը: Նրանք միասին և սուանձին-սուանձին կառուցում էին եկեղեցիներ, հովանավորում դրանք: Հոռոմոսի վանքը իր ժամանակի նշանավոր կենտրոններից էր, ուներ գրատուն, մատենադարան: Մամախաթունն այստեղ շինություններ ավելացրեց և գրատանը նվիրեց այգի, որի եկամուտները պետք է օգտագործվեին սովորողների և ձեռագրերն ընդօրինակող գրիչների ապրուստն ապահովելու համար: Մամախաթունը նվիրատվական արձանագրություններ ունի Ապարանի շրջանի Թեղենյաց վանքում (1211), Հաղբատում (1220), Սանահնում (1229): 1232 թվականին ավարտվում է Տեղերի եկեղեցու և գավթի շինարարությունը նվիրատվական արձանագրություններ Շինարար իշխանոհին իր մահից հետո թողվեց նույն վանքի գավթում:

Վաչեն և Մամախաթունը շինարարական-կառուցողական աշխատանքներ են կատարել Հաղբատում, Հառիճում, նորոգել են Կեչառիսի սուրբ Նշան եկեղեցին⁴: Իրենց

¹ «Հաաքումն պատմության վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, գլ. 2Բ, էջ 138:

² Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 82:

³ Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 141—142:

⁴ Վիմական տարեգիր. կազմեց Կ. Կոստանյանց, և. Պետրերոբ, 1913, էջ 72:

հայրենիք-տիրույթում նրանք կառուցել են Սաղմոսավանքի սուրբ Սիոն եկեղեցին։ Նրանց մեկենասությամբ է կառուցվել Հովհաննավանքի կաթողիկե եկեղեցին։ Վաչեն, ինչպես հաղորդում է Հովհաննես եպիսկոպոս Ծախյաթունյանցը, իր մահից հետո «ամփոփի ի մէջ եկեղեցոյն ի հարաւակողմն առ դրան աւանդատան»⁵։

Ծնողների գործը շարունակեցին եռանդաշատ ամուսիններ Քուրդ Ա Մեծը և Խորիշահ Մամիկոնյանը։ Քուրդը 1220 թվականից գործակցում էր հորը։ Նա իր ժամանակի ազդեցիկ դեմքերից էր և մեծ դեր է խաղացել երկրի քաղաքական կյանքում։ Եթե հոր՝ Վաչեի իշխանության առաջին շրջանը խաղաղ կառուցման շրջան էր, ապա վերջին տարիները և Քրդի իշխանության տարիները համընկան մոնղոլական հրոսակների ասպատակությունների հետ և իրենց կնիքը դրեցին ինչպես Քուրդ Ա-ի, այնպես էլ նրա հաջորդների քաղաքականության վրա։ Նրանք իրենց հողերը ասպատակություններից զերծ պահելու համար գործարքի մեջ են մտնում մոնղոլների հետ, ճկուն քաղաքականության շնորհիվ և մատուցած ռազմական ծառայությունների համար քաղաքական կշիռ ձեռք բերում մոնղոլ իշխողների մոտ, արժանանում նրանց վստահությանը։ Իր և մոնղոլ իշխողների հարաբերությունները Քուրդ Ա-ն Հովհաննավանքի 1250 թվականի արձանագրության մեջ այսպես է գնահատել. «... խնամաւքն ԱՅ հաճո եղե(ա)լ այլազգի զարացն մետողաց, զանձն իմ եղի ի վերա էկեղեցեաց հաց. եւ վասն առ ԱԾ սիրոյն կրկին հաստատեցաք զմիաբանութիւն մեր առ սբ Կարապետս եւ եղաք սկիսքն մեծափառ տանս եւ բազում արդեամբ հասուցաք ի կատար»⁶։

Այդ խառնակ ժամանակներում անգամ ոչ մի պահ չդադարեցին կառուցողական աշխատանքները։ 1235 թ. Քուրդը և Խորիշահը իրենց վաղամեծիկ դստեր՝ Մամախաթունի հիշատակին կառուցում են Սաղմոսավանքի գրատուն-մատենադարանը։ Վաճառելով գույքը, գրատունը ապահովում են անհրաժեշտ գրքերով, նվիրում են ոսկետուփի Ավետարան։ Սա առաջիններից մեկն է հայ իրականության մեջ գրի և դրարացի հովանավորության գործում։ Ծինարար ամուսինները մորոգել են Սևանի Առաքելոց վանքը, կառուցել են Մոավյանի,

Աստվածնկայի (Ապարանի շրջան) հոյակերտ եկեղեցիները, Սաղմոսավանքի գավիթը, Հովհաննավանքի ժամատունը, որին որպես սեփական վիճակ հատկացրել են Արագածոտնի և Նիգի մի զգալի մասը՝ Ապարանից մինչև Աշնակ՝ Քասաղ գետի սահմանով⁷։

Կյանքի վերջին տարիներին «...Իշխան Քուրտ թողեալ զմարմնաւոր փառսն, հետեւեցաւ անանց փառացն։ Եւ գնացեալ ի Սեւան կղզին, եւ զգեցաւ հանդերձ միայնակեցի, եւ եղև կրօնաւոր, եւ վախճանեցաւ անդ, եւ կենդանացաւ առ Քրիստոս։ Եւ թաղվեցաւ ի գաւիթ եկեղեցոյս», գրել է Զաքարիա Սարկավազը⁸։ Քուրդ Ա-ն մահացել է 1267 թվականին։

Քրդի կենդանության օրոք որդիներից Վաչեն Ծախնշահ Զաքարյանից գնում է Երեւոյք գյուղը և կեսը նվիրում Սաղմոսավանքին, կեսը՝ եղբորը՝ Հասանին, որ շեն պահի եկեղեցին։ Սաղմոսավանքի իր արձանագրության մեջ Վաչեն միաժամանակ հայտնում է. «...եւ գնեցի լճից իմոց ԺՌ սայիտակի զԱղկունծ յիւանձէ, յորդո Ծախնշահի, ...զոր լառաջ պապն իմ Վաչէ գնել էր ի մեծ սպարապետէն Զաքարէէ եւ գրել ի դուռն եկեղեցոյս»⁹։ Այս Վաչեին է պատկանում Սաղմոսավանքի նախորդից ավելի վաղ գրված ևս մեկ անթվակիր արձանագրություն, որով նա հայտնում է, որ կառուցել է եկեղեցի. «... Ես Վաչէ շինեցի զեկեղեցիս, եւ արարի արդիւնս յոյուս, եւ ետու զիմ դրամագին այգին Սերկելի...»¹⁰։

Քուրդ Ա-ին հաջորդել են որդիները՝ Հասանը և Դավիթը։ Սրանք ևս նվիրատվություններ են կատարել իրենց տիրույթում գտնվող վանքերին, բայց այլևս ծնողների ավանդը չեն կարողացել շարունակել։ Մոտ 1310 թվականից իշխանության դեկր իր ձեռքը վերցրեց Քուրդ Ա-ի թոռը՝ Տայիրի որդի Քուրդ Անբերդցին։ Ծիշտ է, Քուրդ Բ-ն ևս շինարարական մեծ աշխատանքներ չկատարեց, բայց ամեն ինչ արեց վանքերը շենացնելու, շեն պահելու համար։ Եթե նրա իշխանության առաջին տարիներին (1310 թ.) գրված հիշատակարանում գրիչ Սարկավազը հայտնում է, որ խիստ հարկահանությունը քայքայում է երկիրը, գյուղերը դատարկվում են, վանքերը ավերվում. «...զի ի խիստ և լանհանարին հարկապահանջութենէ ծախեա(լ) լինին ուստերք և դստերք աշխարհիս մեր, և բա-

⁵ Ստորագրություն կաթողիկե Էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ, աշխատատիրութեամբ Յովհաննէս եպիսկ. Ծախյաթունյանցի, հ. 2-րդ, 1842, Էջմիածին, էջ 175։

⁶ Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը, էջ 88։

⁷ Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը, էջ 81։

⁸ Զաքարեայ սարկաւազի պատմագրութիւն, Վարշապատ, 1870, գլ. Թ, էջ 14։

⁹ Ստորագրություն կաթողիկե, էջ 122—123։

¹⁰ Վիմական տարեգիր, էջ 147։

գում գեղք և վանորայք ատեր և անհանգիստ, և բահանայք տարաշխարհիկ լինին»¹¹, ապա վերջին տարիներին (1335 թվականին) մեկ այլ հիշատակարանագիր նրան ներկայացնում է մեծ ոգևորությամբ և սիրով. «...Յայսմ ժամանակի երեսեալ քաջ և արի, յաղթող և բարձրաբազուկ իշխանաց իշխանն՝ յագգէ Վաչէի, որդի Տալիքին, որդւոյ բարեպաշտ և աստուածատէր Քրդիին, որ և անուն նորա Քուրդ կոչի, որոյ անուամբն և քաջութեամբն մնաց գաւառս մեր և վանորայքս անշարժ և անվնաս յայսմ մեղաշարժ և դառն ցասմանցս, զի յայսմ նուազել և դառնացեալ ատուրս, որ վասն մեղաց մերոց, երեսեալ մեծափառ և աստուածահաճայ մեծ զօրավարն և երեսելի նախամարտիկ, պարծանաց և զարդու գաւակն Հայաստանեաց, ամենօրհնեալ Քուրդն. զի ոտնաձայնք երիվարացն նորա, և ճոճին նիզակացն, և փայլատակումն սուտերացն, ճայթմունք աղեղացն, և կոտ գրահքն և ասպարափակ լինելն, և այլ ահարկու կազմութեամբ՝ զարհուրեցուցանէին զթշնամիսն, թող զյաղթութիւն և զքաջութիւն, և քազում պատերազմաց վանումն ի ձեռն նորա, և ւազատագորաց նորա քազմութիւն, գեղեցկութեամբ՝ իբրեւ զօր երկնից, և քաջութեամբ՝ իբրեւ զառիւծ կամ քաջարծուի ի վերայ Հայաստանեաց, յամենայն պատերազմունս: ...Քաղցրասցի նմա աշք բոնատրաց և մեծամեծաց, և թըշնամիք նորա առաջի յամօթ և նկուն լինցին, և իբրեւ զԿՈՒ և զԴադան յանդունդս իջցեն. և ձեռք նորա հանապազ ի վերայ քիկնաց թշնամեաց իւրոց, ամէն»¹²:

¹¹ Ժ. Դ. դարի հաղերեն ձեռագրերի հիշատակարաններ. կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 65:

¹² Նույնը, էջ 271:

Անվախ քաջամարտիկ, մեծ զորավար Քուրդ Անբերդցին, 14-րդ դարի առաջին կեսի քաղաքական կյանքի ակնաւոր դերերից մեկը, մինչև իր կյանքի վերջը «պահէր խնամօքն և ողորմութեամբն Աստուծոյ... զվաներս ի խաղաղութեան»:

1345 թվականին հորը փոխարինեց Թեոդորոս Չրքիւնը՝ Վաչուտյան տան վերջին զահեքեց իշխանը: Սրա օրոք, Չորանյան Մելիք Աշրաֆի ասպատակությունների հետևանքով, քացատությամբ մի քանի իշխանությունների, մյուս ֆեոդալական տները կորցրեցին իրենց իշխանությունը: Պատմության թատերաբեմից հեռացան նաև Վաչուտյանները:

Վաչուտյան իշխանների և իշխանութիւնների ձեռակերտ և մեր միջնադարյան ճարտարապետության զարդը հանդիսացող գրեթե բոլոր եկեղեցիները՝ Հովհաննավանքը, Սաղմոսավանքը, Տեղերի վանքը, Աստվածընկալը, Մոսլվանի սուրբ Աստվածածինը, մեծ դեր են խաղացել մեր ժողովրդի մշակույթի պատմության մեջ: Այս վանքերում գործել են դպրոցներ, գրվել ու ընդօրինակվել են գրքեր, որոնց միայն մի փոքր մասն է հասել մեր օրերը: Վաչուտյանների նվիրատվությունները մեծ չափով նպաստել են նաև մշակույթի այնպիսի հոշակավոր օջախների զարգացմանը, ինչպիսիք են Հաղբատի, Սանահնի, Հոռոմոսի, Հատիհի, Կեչատիսի, Թեղեկյաց վանքերը:

Վաչուտյանների ձեռակերտ հուշարձաններից մի քանիսը (Աստվածընկալ, Հովհաննավանք) կիսավեր վիճակում են: Տեղերի եկեղեցու վերականգնման աշխատանքները շուտով կավարտվեն: Վերականգնվելու է նաև Մոսլվանի սուրբ Աստվածածին եկեղեցին: Նրանց կառուցած մյուս եկեղեցիները նույնպես կվերականգնվեն և կդառնան Վաչուտյան շինարար իշխանների կենդանի հուշարձանը:

